

Արձանագրություն N11

2023 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 14.00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետի տեղակալ Լ. Մովսիսյանը ներկայացրեց օրակարգում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին մաքսային գործառնությունների մասով ծառայությունների մատուցման նոր մոդելի (Լիազորված տնտեսական օպերատոր) ներդրման հայեցակարգը: Մասնավորապես, նշեց, որ հայեցակարգի շրջանակում առաջարկվում է վերաբաշխել մաքսային գործառնությունները՝ առանձնացնելով մաքսային մարմինների կողմից իրականացվող մաքսային հսկողության գործառնությունները և հսկողության իրականացման համար այլ օժանդակ գործառնությունները՝ մաքսային հսկողությունը վերապահելով բացառապես մաքսային մարմին, իսկ մաքսային գործի բնագավառի այլ օժանդակ գործառնությունների մասով՝ ստեղծել մասնավոր կազմակերպությունների կողմից իրականացման, արդյունքների մաքսային մարմինների կողմից ընդունման և արդյունքների նկատմամբ հսկողության հնարավորություն: Նշվեց, որ Լիազորված տնտեսական օպերատորը կարող է ունենալ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով նախատեսված առաջին, երկրորդ կամ երրորդ տիպի վկայականներից մեկը կամ առաջին երկուսը, որոնց շրջանակում հնարավորություն կունենա իրականացնելու մի շարք մաքսային գործառնություններ: Խորհրդի անդամներին, այդ թվում հրավիրված կազմակերպությունների ներկայացուցիչներին վերջինս հարցրեց, թե արդյոք ներկայացված հայեցակարգի վերաբերյալ առկա են հարցեր: «ԱՍԷԴԼ» ընկերության ներկայացուցիչ Ա. Ենգիբարյանը հարց բարձրացրեց պահեստի պահանջների

բավարարման վերաբերյալ, մասնավորապես՝ նշեց, թե ինչպես կարող է ծանոթանալ օրենսդրական պահանջներին: Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետի տեղակալ Լ. Մովսիսյանը նշեց, որ Եվրասիական տնտեսական միության թիվ 131 որոշմամբ սահմանված են պահեստային տարածքներին ներկայացվող բոլոր պահանջները: Նշեց, որ հիմնական պահանջները նույնն են, ինչ պահանջներ, որ առաջադրված են ժամանակավոր պահպանման պահեստների համար, օրինակ՝ տրանսպորտային միջոցների մուտքի ելքի հնարավորությունը, ավտոկայանատեղիների, սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված պահանջները և այլն: ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության պետ Գ. Սահակյանն էլ նշեց, քանի որ հետբացթողումային հսկողության վարչությունում կազմակերպությունն ունի համապատասխան կոնտակտային աշխատակից, ապա հարցերի առկայության դեպքում կարող են դիմել վերջինիս:

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանն անդրադարձավ LSO-ների վերաբերյալ առաջարկվող մեխանիզմին՝ նշելով, որ նախատեսվում է մաքսային գործառույթների մի մասը տալ բիզնեսին, այսինքն՝ եթե բիզնեսը բավարարում է որոշակի ստանդարտի, ապա բիզնեսն ոչ միայն մաքսազերծելու է իր ապրանքը, այլ կարող է մեկ այլ կազմակերպությանը մատուցել ծառայություն: Միաժամանակ, առաջարկեց, որ խորհրդատվական ընկերությունները քննարկեն նշված գաղափարը բիզնեսի ներկայացուցիչների հետ և հաջորդ հանդիպմանը գործնական քննարկեն:

2. Խորհրդի անդամներին ներկայացված օրակարգում ընդգրկված էին նախորդ նիստի օրակարգի՝ աշխատանքային կարգով քննարկումների արդյունքներով լրամշակված նախագծերը:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանն անդրադարձավ հարկային պլանավորման չարաշահման նախագծի վերաբերյալ աշխատանքային քննարկման ժամանակ ներկայացված դիտարկումներին ու առաջարկություններին: Նշեց, որ ներկայացված առաջարկների և դիտարկումների հիման վրա նախագիծը խմբագրվել է: Առաջին առաջարկը վերաբերում է նրան, որ նախագծով նախատեսվում է, որ հարկային օրենսգրքի 30.1-ին հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով հարկային պլանավորման մեթոդների չարաշահումներ հայտնաբերելիս հարկ վճարողից գանձվում է

տուգանք՝ նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորության 150 տոկոսի չափով: Նշեց, որ դրա հետ կապված հարցրել են, թե արդյոք դա վերջնական հարկային պարտավորություն է, թե վճարվելու է նաև հաշվարկված հարկային պարտավորությունը: Նշեց նաև, որ նախագծով հստակեցվել է, որ տուգանքը հարկային պլանավորման մեթոդների չարաշահումներ իրականացնողների համար հարկային պլանավորման սխեմայի կիրառման ժամանակահատվածի մասով վերջնական հարկային պարտավորություն է: Հաջորդ առաջարկը վերաբերում է ուղեցույցի մշակմանը և համապատասխան մասնագետների վերապատրաստմանը: Նշված առաջարկի վերաբերյալ հայտնեց, որ ներկայացված առաջարկը ընդունվել է ի գիտություն և նախագծի ընդունմանը զուգահեռ կիրականացվեն վերապատրաստումներ և կմշակվի ուղեցույց:

Հաջորդ դիտարկումը վերաբերում է հաշվարկների մեջ եռամսյակ նախատեսելուն, առաջարկվում էր եռամսյակի փոխարեն նախատեսել միայն տարեկան: Դրա հետ կապված նշեց, որ օպերատիվ կարգով արձագանքելու համար է նախատեսվել եռամսյակը: Հաջորդ առաջարկը վերաբերում է նախագծի վերաբերյալ ԱԺ-ում հանրային լսումներ կազմակերպելուն, որի մասով նշեց, որ դա ՊԵԿ-ի տիրույթից դուրս է գտնվում: Նշեց նաև, որ նախագծից հանվել է քննարկման ժամանակ ներկայացված անհատականացման միջոցներ ձևակերպումը, իսկ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագրի շրջանակում (ֆրանչեյզինգ) իրականացվող գործարքների մասով նախագծով սահմանվել է բացառություն:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը հարցրեց, որ եթե հայտնաբերվել է հարկային պլանավորման չարաշահման դեպք, առկա չեն համապատասխան հաշվապահական փաստաթղթերը, ապա արդյոք այդ դեպքում հարկատուն պարտավորվում է վերականգնել հաշվապահական բազան, թե անուղղակի եղանակով է գնահատվելու հարկային պարտավորությունը:

Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը նշեց, որ նշված դեպքում հարկային պարտավորությունը կհաշվարկվի անուղղակի եղանակով:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանն առաջարկեց օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը հետաձգել հաշվի առնելով, որ ուղեցույցի մշակման և աշխատակիցների վերապատրաստման համար ժամանակ է պահանջվելու: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ այդ մասով առարկություններ չկան և ընդունելի համարեց առաջարկը:

ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը հարցրեց, թե արդյոք ընդունելի է նախագծի այս տարբերակով հետագա ընթացքի ապահովումը՝ հաշվի առնելով Փ. Թադևոսյանի առաջարկը: Վերջինիս ի պատասխան, «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ ցանկանում է հավաստիանալ, որ բոլոր այն դեպքերում, չնայած, որ բավարարում է նշված պայմաններին, սակայն ակնհայտ է, որ չարաշահման կոմպոնենտ առկա չէ, ապա կանոնները լինեն հստակ և բարձիթողի վիճակ չլինի: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ նշված գործիքը կիրառվելու է բոլոր այն դեպքերում, որտեղ ակնհայտ առկա է հարկային պլանավորման չարաշահում:

«Գործատուների հանրապետական միություն» ՀԿ ներկայացուցիչ Հ. Հարությունյանը նշեց, որ իր ներկայացրած առաջարկը՝ «չարաշահում առկա չէ, եթե հարկային մարմնի կողմից չհիմնավորվի բիզնեսի տրոհումը» ձևակերպման հետ կապված չի ընդունվել: Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը նշեց, որ նման ձևակերպման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ նախագծով նշվում է, որ եթե հիմնավորվում է, ապա նոր կլինի չարաշահում: Հաջորդիվ, Հ. Հարությունյանը հարցրեց, թե արդյոք տուգանքը կիրառվելու է սխեմայի բոլոր մասնակիցների նկատմամբ և եթե այո, ապա արդյոք դա չի հակասում հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվության համաչափության սկզբունքին:

Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը նշեց, որ հակասություն առկա չէ: Միաժամանակ, նշեց, որ նախագծով այդ մասով կարող են նախատեսել համապարտ պատասխանատվություն:

Տ. Քեյանը հարցրեց, թե ինչ է նշանակում նախագծի 3-րդ հոդվածում նշված՝ «ակնկալվող հարկային օգուտը» ձևակերպումը, ինչպես է գնահատվելու ակնկալվող

օգուտը և առաջարկեց հանել այն: Նշված ձևակերպմանը անդրադարձավ նաև «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը:

Վերջիններիս ի պատասխան, ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը նշեց, որ վարչական վարույթի ընթացքում պետք է հիմնավորեն, որ սխեմայի կիրառման արդյունքում ակնկալվել է ստանալ օգուտ: Միաժամանակ, նշեց, որ այդ ձևակերպումը կհանվի:

Տ. Քեյանի հաջորդ դիտարկումը վերաբերում է նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ մասի հետևյալ ձևակերպմանը՝ հարկային պլանավորման մեթոդների չարաշահումներ հայտնաբերելիս հարկային պլանավորման սխեման կիրառելու ժամանակահատվածում հարկային պլանավորման սխեմայում ընդգրկված բոլոր հարկ վճարողների հարկային պարտավորությունները համալիր հարկային ստուգումների կամ թեմատիկ ուսումնասիրությունների արդյունքում հաշվարկվում կամ վերահաշվարկվում են այնպես, ինչպես կարող էին առաջանալ հարկային պլանավորման մեթոդների չարաշահման բացակայության դեպքում: Վերջինիս հետ կապված նշեց, թե որ ժամանակահատվածն է հիմք հանդիսանալու պարտավորության հաշվարկման համար: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը նշեց, որ հիմք է հանդիսանալու այն ժամանակահատվածը, որի ժամանակ իրականացվել է հարկային պլանավորման սխեմա՝ հաշվի առնելով նաև վաղեմության ժամկետը:

Միաժամանակ, Տ. Քեյանը նշեց, որ ձևակերպումները ընդհանրացված են ներկայացված, օրինակ՝ հարկ վճարողին տրված ցանկացած խորհրդատվություն կարող է դիտվել որպես հարկային պլանավորում և հարց բարձրացրեց տուգանքի կիրառության վերաբերյալ, մասնավորապես՝ հնարավոր օգուտի և պատասխանատվության չափի, համամասնորեն բաշխման կիրառության մասին: ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ ներկայացված հարցերը լրացուցիչ կքննարկվեն:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, թե ինչու է նախագծով թվարկվում հարկային պլանավորման չարաշահման առկայությունը որոշելու հիմքերը և նշեց, որ ավելի նպատակահարմար կլինի ընդհանուր սահմանում տալ: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալ Կ. Թամազյանը նշեց, որ քննարկումների արդյունքում որոշվել է թվարկվել հնարավոր հիմքերը՝ որոշակիություն

ապահովելու համար: ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ հնարավոր չէ բոլոր հիմքերը սպառիչ թվարկել և միգուցե ընդհանուր սահմանում օրենսգրքով տրվի, իսկ հիմքերը ենթաօրենսդրական ակտերով սահմանվեն կամ ուղեցույց մշակվի, որտեղ նշված կլինեն դեպքերը:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ միգուցե հարկային պլանավորման ձևակերպման մեջ սահմանափակում դրվի և նշվի, որ կիրառվում է, եթե գործարքի կողմերը երկուսն են: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ ներկայացված դիտարկումը նկատի կունենան:

«ՓրայստոթերհաուսԿուպերս Արմենիա» ընկերության ներկայացուցիչ Գ. Ղուլիջօղլյանը հարցրեց, որ եթե հարկային պլանավորման սխեմայի շրջանակներում կան գործարքներ, որոնք նաև տրանսֆերային գնագոյացման առարկա են հանդիսանում, արդյոք տուգանքը կիրառվելու է տրանսֆերային գնագոյացման շրջանակներում, թե սխեմայի շրջանակներում: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադասյանը նշեց, որ կիրառվելու է տրանսֆերտային գնագոյացման շրջանակներում:

3. ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը ներկայացրեց թեյավճարների հարկման հետ կապված աշխատանքային քննարկման ժամանակ ներկայացված դիտարկումները, մասնավորապես՝ նշեց, որ առաջարկվել է շահութահարկի մասով հստակեցնել, թե թեյավճարները ինչպես են հարկվելու և այդ առաջարկը ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ, նշեց, որ ներկայացված մի քանի դիտարկումների մասով նախագիծը չի խմբագրվել, մասնավորապես՝ թեյավճարները հարկվեն որպես կազմակերպության եկամուտ, թե ֆիզիկական անձի եկամուտ: Նշեց, որ դրա մասով մնում են այն կարծիքին, որ դա կազմակերպության եկամուտ է՝ հաշվի առնելով այն, որ հայկական իրականության մեջ կազմակերպությունը աշխատավարձի փոխարեն է վճարում աշխատակցին: Ինչ վերաբերում է ՀԴՄ կիրառության խնդրին, թե սպասարկման ժամանակ թեյավճար վերցնելու պարագայում, ինչպես պետք է կտրոնը տպագրվի, նշեց, որ սպասարկողը թեյավճարը տալիս է գանձապահին և վերջինս տպագրում է ՀԴՄ կտրոն:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ անհրաժեշտ է հետաձգել նախագծի ընդունումը, քանի որ հակառակ դեպքում ավելի մեծ խնդիրներ են առաջանալու:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ ուսումնասիրել է մի շարք երկրների փորձը թեյավճարների հարկման հետ կապված: Միաժամանակ, նշեց, որ շատ երկրներում թեյավճարները համարվում են հիմնականում ֆիզիկական անձի եկամուտ, բացառիկ դեպքերում է համարվում կազմակերպության եկամուտ և այն էլ այն դեպքում, երբ թեյավճարը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին: Ուսումնասիրությունների արդյունքում առավել հարմար է համարում ամերիկյան մոդելը, որտեղ թեյավճարը համարվում է ֆիզիկական անձի եկամուտ, սակայն հարկը պահում է հարկային գործակալը: Նշեց նաև, որ ինչպես հասկանում է հիմնականում ներկայացված նախագիծը վերաբերում է հանրային սննդի ոլորտին, քանի որ այլ ոլորտներում կիրառության առումով ավելի դժվար կլինի: Հ. Սահակյանը որպես խնդրի լուծման տարբերակ նշեց, որ կարելի է թեյավճարը լրացնել հաշվում, հարկային գործակալը հաշվառում իրականացնի և հաշվարկի ու վճարի հարկը: Միաժամանակ առաջարկեց, որ հսկիչ գնման կարգավորումներում կատարվեն լրացումներ թեյավճարների մասով կտրոնների լրացման կարգի պահպանման ուղղությամբ:

ՀՀ ՊԵԿ նախագահ Ռ. Բադալյանն էլ նշեց, որ համաձայն է այն դիտարկմանը, որ թեյավճարը հանդիսանում է ֆիզիկական անձի եկամուտ: Նշեց նաև, որ անհրաժեշտ է տարանջատել այն դեպքերը, երբ հանրային սննդի գործունեություն կամ այլ գործունեություն իրականացնողը այլ պայման է կիրառում՝ նախատեսելով, որ թեյավճարները հավաքվեն մի տեղ, որից հետո նոր իրականացվի բաշխում: Նշեց նաև, որ միգուցե պետք է հասնեն նրան, որ թեյավճարներն անկանխիկ վճարվեն: Միաժամանակ, նշեց, որ նախագիծը կխմբագրվի և նորից կդրվի շրջանառության մեջ:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը նշեց, թե արդյոք առկա են համապատասխան վերլուծություններ և հաշվարկներ, թե ինչ է տալու նախատեսվող օրենսդրական նախաձեռնությունը:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բադալյանը նշեց, որ խնդիր կա, մասնավորապես՝ հանրային սննդի ոլորտում աշխատակիցների աշխատավարձը ցածր են ցույց տալիս, իսկ երբ հարցնում են, թե ինչու է աշխատավարձը ցածր հայտարարագրված, պատասխանում են որ, թեյավճար են ստանում, ուստի անհրաժեշտություն է առաջացել կարգավորել այդ ոլորտում առկա խնդիրները:

Հաջորդիվ, ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը անդրադարձավ օրակարգի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին, որով նախատեսվում է հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկում սխալ (ոչ հավաստի) տվյալներ լրացնելու դեպքում, որոնք չեն առաջացրել և չեն կարող առաջացնել հարկի նվազեցում նախատեսել վարչական պատասխանատվություն: Նշեց, որ աշխատանքային քննարկման ժամանակ ներկայացված հիմնական դիտարկումը վերաբերում է պատասխանատվություն նախատեսելուն: ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը նշեց, քանի որ հարկային օրենսգրքով կատարված լրացման համաձայն՝ հարկային հաշվարկներում պարտադիր է այդ տեղեկատվության լրացումը, հետևաբար՝ նշված պահանջի չկատարման համար նախատեսվել է պատասխանատվություն:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, թե ինչու է նշված նախագծով նախատեսվում ֆինանսական հաշվետվությունները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չիրապարակելու համար նախատեսված վարչական պատասխանատվության չափի կանոնակարգումը և ինչպես է որոշվել պատասխանատվության այդ չափը: Միաժամանակ, առաջարկեց նախագծից հանել այդ կարգավորումը:

Վերջինիս ի պատասխան, Ռ. Բադալյանը նշեց, որ այդ մասով ՀՀ ֆինանսների նախարարությունն է ներկայացրել առաջարկությունը: Նշեց նաև, որ այդ մասով կքննարկեն նախագծից հանելու նպատակահարմարությունը:

4. ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը անդրադարձավ թվային ակտիվների նախագծի վերաբերյալ քննարկման ժամանակ ներկայացված դիտարկումներին: Մասնավորապես՝ նշեց, որ նախագծով փաստաթղթավորման մասով նախատեսվող կարգավորումները խիստ էին և կատարվել է համապատասխան

փոփոխություն, որի համաձայն՝ թվային ակտիվի ձեռքբերման ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով: Հաջորդ դիտարկումը վերաբերում է դրույքաչափերին, մասնավորապես՝ նշեց, որ նախագծում կատարված փոփոխության համաձայն՝ թվային ակտիվ թողարկողի կողմից թվային ակտիվի օտարումից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի դրույքաչափը սահմանվել է 3,5 տոկոս, իսկ առքուվաճառքի դեպքում 2 տոկոս: Հաջորդ դիտարկման մասով, որը վերաբերում է վնասի ծախս ճանաչելուն, նշեց, որ դրա հետ կապված փոփոխություն չի կատարվել ռիսկային համարվելու պատճառաբանությամբ: Նշվեց նաև, որ մյուս կարգավորումների մասով փոփոխություններ չեն կատարվել:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կ. Կարապետյանը հարցրեց, թե թվային ակտիվներով վճարում կատարելիս կուրսն ինչպես է որոշվում, ինչպես է իրականացվում հաշվառումը: Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանը նշեց, որ հարկային օրենսգրքով թվային ակտիվը դիտվում է որպես ապրանք: Բացի այդ նշեց, որ նախատեսվող կարգավորումները ժամանակավոր են, քանի դեռ ԿԲ-ի կողմից ոլորտի կարգավորման համապարփակ կարգավորումներ չեն նախատեսվել:

Հաջորդիվ, ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Լ. Հարությունյանն անդրադարձավ ֆինանսական հաշիվների նախագծին: Նշեց, որ քննարկման ժամանակ դիտարկումներ նախագծի վերաբերյալ չեն ներկայացվել և կրկին ներկայացրեց նախագծով նախատեսվող կարգավորումները: Մասնավորապես՝ նշեց, որ ՀՀ-ում հաշվառված ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ համարվող ֆինանսական կազմակերպություններն օրենքով սահմանված կարգով հարկային մարմին պետք է ներկայացնեն ֆինանսական հաշիվների մասին տեղեկատվություն:

ՊԵԿ նախագահ Ռ. Բադալյանը նշեց, որ ներկայացված առաջարկները լրացուցիչ կքննարկվեն, խորությամբ կուսումնասիրվեն, որոշ նախագծեր կխմբագրվեն և կրկին կդրվեն շրջանառության մեջ:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

11/8/2023

X 

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ